

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ

ԳԵՂԱՍԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
2013-2016թթ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց՝ համայնքի ղեկավար



Ս. Հովհաննիսյանը

Հաստատեց՝ Ի համայնքի ավագանու նիստում

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Ի՞նչ է քառամյա ծրագիրը

1. Համայնքի իրավիճակի գնահատում:
  2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները:
  3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:
  4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում:
  5. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները:
- Հավելված – 1 Համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը:
- Հավելված – 2 Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը:

## Ի՞ՆՉ Է ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

# 1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

## ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գեղասար գյուղը (նախկինում՝ Թափանլի) հիմնադրվել է 1826-27թթ. Բասենից, Ղարսից, Անատոլիայից գաղթած հայերի կողմից: Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1660մ բարձրության վրա, Փամբակ գետի աջ ափին: Հարավից շրջափակված է լեռներով, որոնց գագաթն է պսակում Սուրբ Աստվածածինը՝ բնության անձեռակերտ կոթողը, որի գեղեցկության շնորհիվ էլ գյուղը 1978թվականին վերանվանվել է Գեղասար:

Գեղասարը հիմնովին ավերվեց 1988թ. դեկտեմբերի 7-ի աղետալի երկրաշարժից, որին զոհ գնացին 140 գեղասարցիներ:

Տնքած, անամոք վշտից հառաչեց Գեղասարը, կքվեց, կծկվեց, սակայն ծունկի չեկավ անողոք աղետի առջև... պայքարեց և ոտքի կանգնեց, փլատակներից նորից հառնեց ու ձգտեց շինացման:

Սակայն դեռևս ամբողջությամբ չեն բուժվել վերքերը, դեռևս կան անավարտ շինություններ, փլատակների մնացորդներ, խմելու ջրի, ջեռուցման, բնակարանաշինության կենսական խնդիրներ, որոնց լուծման են նպատակաուղղված գյուղապետի և նրա աշխատակազմի ջանքերը:

Այժմ գյուղի կենտրոնում կառուցվում է երկրաշարժի զոհվածների հիշատակը հավերժացնող հուշակոթողը՝ գյուղապետ Ս.Հովհաննիսյանի, տեղակալ Ա.Գրիգորյանի ջանքերով և գեղասարցի բարեգործ Մ.Հովհաննիսյանի ֆինանսական աջակցությամբ:

Նորակառույց համայնքային կենտրոնի բակում 2012թվականին կառուցվել է Հայրենական Մեծ Պատերազմի զոհերի հիշատակը հավերժացնելու խաչքար հուշակոթողը , Գեղասարցի բարեգործ՝ Մ.Հովհաննիսյանի ֆինանսական աջակցությամբ:

Գյուղի հյուսիսային կողմից անցնում են Գյումրի-Վանաձոր խճուղին և երկաթուղու գիծը, որոնց միջոցով ապահովվում է գյուղի տրանսպորտային կապը: Գյուղի ջրամատակարարումը կազմակերպված է շրջակա լեռնային աղբյուրներից բերված ջրագծերով, որոնք դեռևս չեն բավարարում գյուղի պահանջարկը:

Ներկայումս աշխատանք է ծավալվում նոր ջրագծերի կառուցման և գյուղը ջրամատակարարման ցանցով ապահովելու ուղղությամբ:

## ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղում ապրում են 920 բնակիչներ, որոնցից տղամարդիկ կազմում են բնակչության 43% - ը: Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1. երեխաներ (0 – 6 տ)	-- 83
2. դպրոցական(7 – 17տ )	-- 97
3. 18 – 62 տարեկան	-- 727
4. թոշակառուներ	-- 144
5. հաշմանդամներ	-- 25
6. Աշխատունակներ	-- 727

Գյուղն ունի 303ծուխ, որոնցից 210 – ն ընդգրկված են «Փարոսի» համակարգում:

## ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի (գյուղապետի) կողմից, որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ: Գյուղապետը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով`

- տեղակալ -1 դրույք
- աշխատակազմի քարտուղար -1 դրույք
- առաջատար մասնագետ - 1 դրույք
- 1-ին կարգի մասնագետ -1 դրույք
- 1-ին կարգի մասնագետ - 1 դրույք
- 2-րդ կարգի մասնագետ -1դրույք
- 2-րդ կարգի մասնագետ - 1դրույք
- Սանտեխնիկ -1դրույք
- Հավաքարար -1դրույք
- Պահակ -1 դրույք

Աշխատակազմի ամբողջ ապարատը բաղկացած է 11 հոգուց:Գեղասար գյուղապետարանի աշխատակազմի կառուցվածքը բերված է հավելված 1 – ում:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության 14.03.1997թ.-ի թիվ 51 որոշմամբ հետևյալ կազմով (տե՛ս հավելված 2)`

- մշակույթի տուն - 1 միավոր
- գրադարան, վագոն-տնակ - 1
- բուժկետ - 1
- գբոսայգի -
- վարչական շենք -
- ջրմուղի ցանց
- ոռոգման ցանց - 3 կմ
- գազի ցանց 4.31կմ
- գյուղ. տեխնիկա և գործիքներ -

Խմելու ջրի ներհամայնքային ցանցը կառուցվել է 1960-1961թթ-ին, որի մաշվածությունն այնքան մեծ է, որ ջրի կորուստը հասնում է 30% -ի: Անձրևաջրերն ու կեղտաջրերը հաճախ ներթափանցում են խմելու ջրի ցանց, որը վտանգավոր է դարձնում ջրի օգտագործումը:

Ճանապարհային ցանցը վերանորոգման կարիք ունի: Ներկայումս անհրաժեշտ է վերանորոգել 10կմ ճանապարհ և փողոցներ:

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղբահանությունը կատարվում է անհատական ձևով` մոտ 100 %-ով:

Չկան խողովակներ ու կիսախողովակներ խմելու ջրի և ոռոգման ներքին ցանցերի վերանորոգման համար: Խմելու ջրի մատակարարումը հաճախ կատավում է ընդհատումներով՝ տնտեսական ձգնաժամի և ջրամատակարարման ցանցի մաշվածության պատճառով:

## ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքում կա 130 առանձնատուն, 14.127/ տասչորսհազար հարյուր քսանյոթ քմ. տարածքով: Բնակարանով անապահով և կարիքավոր ընտանիքների թիվը 150-ից ավել է, որը տարեցտարի աճում է:

Երկրաչարժից հիմնահատակ քանդված գյուղի 130 ընտանիքներ են միայն ապահովված բնակարաններով: 19 ընտանիքներ ապրում են ժամանակավոր կացարաններում, 148 ընտանիք՝ վագոն-տնակներում, 5 ընտանիք՝ վթարային տներում: Բնակարանային լուրջ խնդիրներ ունեն նորաստեղծ ընտանիքները:

Վերը նշված խնդիրները պատճառ են հանդիսանում, որոշ ընտանիքների արտագաղթի:

## ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

• Համայնքի վարչական տարածքը	– 1004 հա , որից՝
• Վարելահողեր	-- 269.76 հա
• Խոտհարք	– 3 հա
• Արոտավայրեր	– 150 հա
• Անօգտագործելի հողեր	– 323.33հա
• Չորեր	– 26 հա
• Դաշտային ճանապարհներ	– 5.5 հա
• Արտադրական մաս (կովանոց)	– 0.17 հա
• Ավազի հանք	–
• Գերեզմանոց	– 1.2 հա
• Պանսիոնատ	–
• Տնամերձ հողեր	– 32 հա
• Դպրոց	– 0.5 հա
• Հուշարձան	– 0.02 հա
• Գյուղամիջյան փողոցներ	– 1.0 հա
• Սեփականաշնորհված հողեր	– 225.91 հա, որտեղ
• մեկ հողաբաժնի չափը	– 0.73 հա

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղը ոռոգման ջրով ապահովելու համար 1961թ. կառուցվել է ջրանցք՝ էլեկտրական ջրմուղ պոմպով:

1999-2000թթ-ին կառուցվել է ոռոգման ջրի ստորգետնյա ցանց, որը նպաստում է ջրի անկորուստ օգտագործմանը: Սակայն նախկին ուղիները, երկար ժամանակ չվերանորոգվելուց, երկրաչարժի ցնցումներից բավականին քայքայվել են և պատճառ են հանդիսանում ջրի մեծաքանակ կորուստներին:

Համայնքը հիմնականում զբաղվում է կարտոֆիլի, հացաբույսերի, բանջարաբուստանային կուլտուրաների և խոտաբույսերի մշակությամբ: Բնակլիմայական խիստ

պայմաններում գտնվող գյուղատնտեսությունը տուժում է երաշտից և հաճախակի տեղացող կարկուտից: Չի ապահովվում բարձր բերքատվություն որակյալ սերմացուի պակասի, քիմիչոցների համարյա բացակայությանը, հողի ոչ բավարար սնուցման պատճառով, որովհետև դրանք մեծ ծախսեր են պահանջում:

Անասնապահությամբ զբաղվողներն արտադրում են կաթ, միս, բուրդ, ծու, որոնց իրացման համար մեծ դժվարությունների է հանդիպում՝ համապատասխան շուկայի բացակայության պատճառով:

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գյուղն ունի մեկ միջնակարգ դպրոց, ուր սովորում է 97 աշակերտ: Դպրոցի նորակառույց շենքը հարմարավետ է: Դպրոցն ունի 27 աշխատատեղ, մեկ ուսուցչին ընկնում է 5 աշակերտ:

## ՄՇԱԿՈՒՅԹ, ՄՊՈՐՏ, ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքի գրադարանը գտնվում է վագոն-տնակներում, որը համարյա բոլորովին քայքայված է, գտնվում է անմխիթար վիճակում:

Երկրաչարժի ժամանակ ամբողջովին ոչնչացված գրադարանը վերականգնվել է հանրապետության գրադարանների օժանդակությամբ և այժմ ունի ընդամենը 1020 անուն գիրք, որը հեռու է ընթերցողների պահանջը բավարարելուց:

Համայնքը ունի թե կուլտուրայի տան, թե գրադարանի համապատասխան գույքով, գրքերով ու միջոցներով ապահովվելու խնդիրը:

Սպորտ հրապարակ չունենալու պատճառով երիտասարդությունը զրկված է սպորտով զբաղվելու հնարավորությունից:

## ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Գյուղում գործում է մեկ բուժ - կետ: Շենքը կառուցվել է 20 տարի առաջ: 2012թվականին վերանորոգվել է բուժ. կետի տանիքն ու հատակը, սակայն չկա համապատասխան գույք և սարքավորում: Բուժ. կետն ունի մեկ աշխատող:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Համայնքն ունի 45 բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթությամբ բազմապիսի մասնագետներ, որոնք կարողանում են կազմակերպել կրթության ու դաստիարակության, մշակութային, շինարարական աշխատանքներ:
- Գյուղից մոտ 0.5կմ հեռավորությամբ նախապատմական շրջանի բնակավայրը, գյուղի հարավում, լեռնագագաթին գտնվող Սուրբ Աստվածածին մատուռը կարող են նպաստել զբոսաշրջության զարգացմանը:

## ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅՆ ԿՈՂՄԵՐԸ

- Ճանապարհների, խմելու ջրի և ոռոգման ջրի ցանցերի անբավարար վիճակը
- Բնակարանաշինության հետ կապված խնդիրները
- Գործազրկություն

- Գյուղաբերքների իրացման հնարավորության պակասը
- Արտագնա աշխատանքի մեկնողների թվի մեծացումը
- Սոցիալ-տնտեսական, կուլտուր-կենցաղային պայմանների անբավարարությունը
- Վերը նշվածների պատճառով առաջացած արտագաղթն ու ծնելիության նվազում:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Մեծ աշխատուժի առկայություն
- Ռիզոկի ընտրություններով համայնքի ղեկավարի ընտրության հնարավորություն

## ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ԿՏԱՆԳՆԵՐԸ

- Խմելու ջրի ներհամայնքային ցանցի անհետաձգելի վերանորոգման անհրաժեշտությունը (կեղտաջրերի ներթափանցումը խմելու ջրի ցանց կարող է դառնալ վարակիչ հիվանդությունների աղբյուր)
- Արտագաղթը կապված սոցիալ-տնտեսական և սոցիալ-կենցաղային ոչ բավարար պայմանների հետ:

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԱԶՄԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

### Ոազմավարություն

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, գյուղը դարձնել զեղեցիկ, բարեկարգ և ամենաբարեկեցիկ բնակավայրերից մեկը:

Բարեփոխումներ կատարելով, նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին՝

- Համագործակցելով ՀՄՆՀ-ի, շինարարական համապատասխան կազմակերպությունների, ձեռնարկությունների հետ, ձեռք բերելով տեղացի բարեգործների ֆինանսական աջակցությանը, օգտագործելով համայնքի ներուժն ու միջոցները կառուցել բնակարաններ՝ անապահով ընտանիքներին վազոն-տնակներից դուրս բերելու, գյուղացիների բնակարանային պայմանները բարելավելու համար:
- Գյուղը վերջնականապես ազատել աղետի հետքերից, նորոգել ու բարեկարգել ճանապարհները:
- Օգտվելով ՀՄՆՀ-ի աջակցությունից կառուցել Գինեի աղբյուր-Ղեղասար ջրագիծը, վերականգնել ու ընդլայնել գյուղի խմելու ջրի ցանցը՝ համայնքն շուրջօրյա խմելու ջրով ապահովելու, սանիտարահիգիենիկ պայմանները բարելավելու, սուր վարակիչ հիվանդությունները կանխելու համար:



- Հասնել համապատասխան ձեռնարկությունների հետ պայմանագրերի կնքման գյուղմթերքների իրացման համար:
- Համայնքի կուլտուր-կենցաղային պայմանները բարելավելու նպատակով տանել համապատասխան աշխատանքներ՝ կառուցել սպորտ հրապարակ, համալրել գրադարանը գեղարվեստական գրականությամբ:
- Նորոգել և բարեկարգել հանդամիջյան ճանապարհները՝ համապատասխան տրանսպորտի և գյուղմթերքների անխափան ու անվտանգ երթևեկությունը ապահովվելու համար:
- Գտնել բարերար եկեղեցի կառուցելու համար:

Լուծել համայնքը նորմալ կենցաղով ապահովվելու բոլոր հիմնախնդիրները՝ համայնքի առջև ծառայած արտագաղթը կանխելու նպատակով:

### 3. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱԿԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

#### ԾՐԱԳԻՐ 1

#### ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

##### Ներածություն

Համայնքի ջրամատակարարման համակարգը կառուցվել է 1958-1959 թթ.: Ջրագծի երկարությունը կազմում է 4 կմ:

2003թվականին վերանորոգվել է Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից սակայն ունենք ջրագծերի վերանորոգման և վերակառուցման կարևոր խնդիր:

#### ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

1988թ. ահեղ երկրաշարժի պատճառով համարյա ամբողջությամբ վթարվեցին և շարքից դուրս եկան համայնքի ջրագծերը, որոնց նորոգումն անհնար էր վերջին տարիների տնտեսական անկման և ֆինանսական սղության պատճառով, և հիմա օրախնդիր է դարձել ջրագծերի վերանորոգումն ու վերականգնումը:

Ելնելով վերը նշվածից և ընդառաջելով բնակչության դիմումներին, սույն ծրագրով առաջարկվում է հիմնական վերանորոգման ենթարկել և վերականգնել վթարված ու շարքից դուրս եկած ջրագծերը, ընդլայնել ջրամատակարարման ցանցը:

#### ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

- ապահովել համայնքը շուրջօրյա խմելու ջրով,
- նվազեցնել խողովակների մաշվածությունից առաջացած ջրի կորուստները,
- կանխել կեղտաջրերի ներթափանցումից առաջացող սուր վարակիչ հիվանդությունները:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝

- Իրականացնել, ընդգրկվելով համապատասխան ծրագրում ,որը վերջնականապես
- կարողանա կարգավորել խմելու ջրի ջրագծերի վերանորոգումը:

**ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍԿՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Իրականացնելով այս ծրագիրը, համայնքը 100%-ով կապահովվի շուրջօրյա խմելու ջրով, կնվազի խմելու ջրի կորուստները, ներկայիս 30% -ից հասնելով 5-10 % -ի, կբարելավվի գյուղի ազգաբնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

**ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

Նախնական մոտավոր հաշվարկներով 1.5-2 կմ երկարությամբ ջրագծերի վերանորոգման և վերակառուցման աշխատանքների արժեքը կկազմի մոտ 15 հազար ԱՄՆ դոլար:

**ԾՐԱԳԻՐ 2**

**ՀԱՍԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ**

Ներածություն.

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 10 կմ-ից ավելի, որից 3 կմ-ը կենտրոնական ճանապարհն է: Երկրաշարժի ժամանակ, ինչպես նաև փլատամների մաքրման և հետագա աշխատանքները կազմակերպելիս քանդվել ու աներթևեկելի են դարձել ներհամայնքային ճանապարհները:

Ելնելով ստեղծված իրավիճակից և հաշվի առնելով համայնքի անդամների դիմումները՝ սույն ծրագրով առաջարկվում է նորոգել և բարեկարգել համայնքի ներքին ճանապարհները:

**ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ծրագրի հիմնական նպատակն է՝

- ապահովել տրանսպորտի բոլոր միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ՝ տարվա բոլոր եղանակներին,
- վերացնել փողոցների ջրափոսերը,

- Գյուղը դարձնել բարեկարգ և բարետես:

Ծրագրի խնդիրներ

- կատարել ավագի, խճաքարի և կավի խառնուրդի փռում համայնքի փողոցներում՝ ապագայում նախատեսելով ասֆալտապատման աշխատանքներ,
- աշխատանքները կազմակերպել 2012 - 2016թթ. ընթացքում:

**ԾՐԱԳԻՐ 3  
ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ**

Ներածություն

Գյուղը գազաֆիկացված է կիսով չափ , սակայն գյուղի մնացած բնակիչների համար այժմ,ավելի քան երբևէ սոցիալ- կենցաղային հիմնախնդիրը նույնն է մնացել:

**ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ**

Ընդգրկվել այնպիսի մի ծրագրում ,որը գյուղը գազաֆիկացնի լիովին ,որպիսի բոլոր բնակիչները կարողանան օգտվել գազագծերից :

**ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ծրագրի նպատակներն են՝

- Ապահովել գյուղի ջեռուցման սոցիալ-կենցաղային մյուս պահանջները:
- Նպաստել գյուղացիների բարեկեցությունը:
- Կանխել սկիզբ առած արտագաղթը:

Ծրագիրն իրագործելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝

- ձեռքբերել ՀՀ կառավարության թույլտվությունը:
- Կնքել պայմանագիր «Հայրուսգազարդչին» համատեղ ձեռնարկության հետ:
- Կազմակերպել բարեգործների և համայնքի կողմից ներդրումների հարցը:

**ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

- Լուծել համայնքի ջեռուցման հիմնախնդիրը:
- Բարելավել գյուղի սոցիալ-տնտեսական, սոցիալ-կենցաղային պայմանները:
- Նպաստել գյուղի բարեկեցությանը:

**ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

Նախնական մոտավոր հաշվարկներով գյուղումի մյուս մասը ցանցավորելու համար կատարվող ծախսը կկազմի մոտ 15 հազար ԱՄՆ դոլար:

#### 4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: Լուռու մարզի Գեղասար համայնքում այն ունի հետևյալ պատկերը:

		(հազ. դրամ)				
	Եկամուտի տեսակը	2012թ փաստ.	2013թ նախա- տեսվա ծ	2014թ կանխա տեսում	2015թ կանխա տեսում	2016թ կանխա տեսում
	<b>ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ</b>					
Ա	Հարկային եկամուտներ	14013.1	14823.0			
1.	Հողի հարկ	2261.9	2230.0			
2.	Գույքահարկ	850.0	970.0			
3.	Եկամտահարկ					
4.	Այլ հարկ. եկամուտներ					
Բ	Տուրքեր					
1.	Պետական տուրքեր					
2.	Տեղական տուրքեր	80.0	60.0			
Գ	Ոչ հարկ. եկամուտներ	50.0				
1.	Պետ. պահուստային հողերի վարձավճար.	699.4	644.0			
2.	«ՏԻՄ» պետության կողմից լիազորված					
3.	Տեղական վճարներ	70.0	30.0			
4.	Այլ ոչ հարկ. եկամուտ.					
Դ	Պաշտոնական տրանս- ֆերտներ, դոտացիա	10002.2	10889.0			
Ե	Ֆոնդային բյուջե	5091.8	2508.1			
Զ	Տարեսկզբի ազատ մնացորդ	3188.4	2508.1			


**5. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ  
ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

<<	Ցուցանիշներ	Չափի միավոր	2011թ փաստ	2012թ փաստ	2013թ փաստ	2014թ կանխ	2015թ կանխ	2016թ կանխ
	1	2	3	4	5	6	7	8
1	Համայնքի տարածքը	հա	1004	1004				
2	Բնակչության թիվը	մարդ	944	920				
3	Ծնունդը	մարդ	12	13				
4	Մահացությունը	մարդ	6	6				
5	Աշխ. ռեսուրսները, այդ թվում՝ ա)գբադվածները ըստ տնտեսության ճյուղերի	մարդ	715	727				
6	Գործազրկության մակարդակը	%	65	65				
7	Առևտրի և հասարակական սննդի օբյեկտների թիվը	հատ	3	3				
8	Պահուստային հողեր	հա	8	8				
9	Պահուստային հողերի օգտագործման մակարդակ	%	15	15				
10	Խմելու ջրի ներհամայնքային ցանցի երկարությունը	կմ	3	3				
11	Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը	կմ	3	3				
12	Ոռոգման համակարգի տակ ընկած հողեր	հա	113	113				
13	Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկար - ն	կմ	10	10				
14	Զբարեկարգված փողոցների և ճանապարհների երկար - ը	կմ	10	10				
15	Մասնավոր բնակ. ֆոնդ	հազ.քմ	14.127	14.127				
16	Բնակարհիքավոր ընտանիքների թիվը	հատ	170	170				
17	Մեկ շնչին ընկնող ջրի սպառումը	լ / օր	30	30				
18	Ջրի կորուստները ցանցում	%	60	60				
19	Սովորողների թիվը հանրակրթ. դպրոցում	մարդ	92	97				
20	Երեխաների թիվը մանկապ.- մ	մարդ						
21	Գյուղապետարանի և ենթակառուցվածքների աշխատողների թիվը	մարդ	10	9				

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1. Գյուղատնտեսական տնտեսությունների թիվը	– 303, այդ թվում՝		
ա. անհատական տնտեսություն	– 303		
բ. կոլեկտիվ տնտեսություն	--		
գ. պետական տնտեսություն	--		
2. Գյուղ. արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը. 2131.42g			
ա. ցորեն	– 500ցենտներ		
բ. գարի	– 300		
գ. կարտոֆիլ	– 1000		
դ. կաղամբ	-- 50		
ե. բանջարաբուստ. կուլտ.	-- 5		
զ. կաթ	–260.5		
է. միս	-- 15.8		
ը. բուրդ	-- 0.142		
է. ձու	--		
ժ. մեղր	--		
3. Ցանքատարածությունները			
ա. հացահատիկ	– 100 հա		
բ. կարտոֆիլ	– 25		
գ. բանջարաբուստ. կուլտ.	– 5		
դ. կաղամբ	-- 1		
ե. առվույտ	--		
զ. կորնզան	--		
է. միամյա խոտեր	--		
4. Անասնազվխաքանակը, հատ			
ա. խոշոր եղջեր. անասուններ	– 405 գլուխ		
այդ թվում՝ կովեր	– 212		
բ. մանր եղջեր. անասուններ	– 42		
այդ թվում՝ մայրեր	-- 30		
գ. խոզեր	– 2		
այդ թվում՝ մայրեր	– 2		
դ. թռչուններ՝	– 738 թև		
այդ թվում՝ հավեր՝	-- 532		
ե. մեղվաընտանիքներ՝	-- 5		
2. Գյուղատնտեսական մեքենաների և գործիքների քանակը, հատ			
այդ թվում՝			
ա. համայնքային սեփ.- ն		բ. մասնավոր սեփականության	
թրթուրավոր տրակտոր՝	--	թրթուրավոր տրակտոր՝	-- 4
անիվավոր տրակտոր՝	--	անիվավոր տրակտոր՝	-- 2
հացահատիկային կոմբայն	--	հացահատիկային կոմբայն	-- 1
խոտհնձիչ կոմբայն	--	խոտհնձիչ կոմբայն	-- 0
բեռն. ավտո. տարբեր մակնիշի	--	բեռն. ավտո. տարբեր մակնիշի	-- 2
տրակտորային կցասայլեր	--	տրակտորային կցասայլեր	-- 2
գութաններ	--	գութաններ	-- 4
կուլտիվատորներ	--	կուլտիվատորներ	-- 4
շարքացաններ	--	շարքացաններ	-- 1
խոտ հակավորող մեքենաներ	--	խոտ հակավորող մեքենաներ	-- 0
պարարտանյութ ցրիչ	--	կերամանրիչ	--
հատիկաղաց	--		

# ԳԵՂԱՍԱՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԻՍԱՑՈՂ  
ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ

- |  |            |
|--|------------|
| 1. Գյուղապետարանի շենք                   | _ 1 միավոր |
| 2. Մշակույթի տուն                        | -1միավոր   |
| 3. Գրադարան                              | -1միավոր   |
| 4. Խմելու ջրի ներտնտեսային համակարգ      | -1միավոր   |
| 5. Ներտնտեսային ոռոգման ջրի համակարգ     | -1միավոր   |
| 6. Ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ | _ 10 կմ    |
| 7. Ներհամայնքային կամուրջներ             | _ 5 հատ    |
| 8. Հուշարձան                             | _ 2 հատ    |
| 9. Գերեզմանատուն                         | -1միավոր   |





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ  
Գեղասար համայնք, գ. Գեղասար, հեռ.025560412  
Էլեկտրոնային հասցե gegasari-gyuxapetaran@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ


21 դեկտեմբերի 2012թվականի N 28-Ա

ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական  
Ինքնակառավարման Մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի  
պահանջներով և ելնելով անհրաժեշտությունից Գեղասար համայնքի  
2012թվականի բյուջեի 4269 հոդվածի 09.02.02. ենթախմբից 82.000  
/ութսուներկու հազար / դրամ գումար տեղափոխել 4212 հոդվածի  
01.01.01. ենթախմբին Գեղասար համայնքի նոր համայնքային  
կենտրոնի ջեռուցման ծախսերը հոգալու համար:

Մեյրան Թորոսյան *[Signature]* Կողմ/5/      դեմ/ 0/      ձեռնպահ /0/  
Անդրանիկ Կարապետյան *[Signature]*  
Սարգիս Մկրտչյան *[Signature]*  
Վրեժ Սիմոնյան *[Signature]*  
Համլետ Սարգսյան *[Signature]*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԵՐ



*[Signature]*

ՄՏԱՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2012թ դեկտեմբեր 21  
գ. Գեղասար



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՍԱՐ ՀԱՍԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ  
Գեղասար համայնք, գ. Գեղասար, հեռ. 025560412  
Էլ. հասցե [gegasari-gyuxapetaran@mail.ru](mailto:gegasari-gyuxapetaran@mail.ru)

**ՈՐՈՇՈՒՄ**

21 դեկտեմբերի 2012թվականի N 76-Ա

**ԳԵՂԱՍԱՐ ՀԱՍԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ  
ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎՆԵՐԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ  
ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Տեղական  
Ինքնակառավարման Մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին  
կետի և առաջնորդվելով Գեղասար համայնքի 2013թվականի  
բյուջեն հաստատելու մասին ավագանու 21.12.2012թվականի,  
թիվ 26-Ն որոշմամբ.

1. Հաստատել համայնքի 2013թվականի բյուջեի  
եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը:  
(հավելված թիվ 1.2 )
2. Հաստատել համայնքի 2013թվականի ծախսերի նախա-  
հաշիվները, ըստ գործառնական և տնտեսագիտական  
դասակարգման հոդվածների:

**ՀԱՍԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՏԱՍԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ  
Գեղասար համայնք, գ. Գեղասար, հեռ. 025560412  
Էլ. հասցե [gegasari-gyuxapetaran@mail.ru](mailto:gegasari-gyuxapetaran@mail.ru)

**ՈՐՈՇՈՒՄ**

24 դեկտեմբերի 2012թվականի N 77-Ա

**ԳԵՂԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԶԱՐՈՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՍԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՍԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013թվականի փետրվարի 18-ին կայանալիք ընտրություններին մասնակցող թեկնածուների քարոզչական պաստառները փակցնելու համար Գեղասար համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

- 1) գյուղամիջյան աղբյուրի մոտ 5քմ
- 2) գյուղ մտնող կամուրջի մոտակայքում 5քմ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՍՏԱՍԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2012թ. դեկտեմբեր 24  
գ. Գեղասար